Հավելված N 528
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տնտեսական հետազոտությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.24-Ղ3-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության Բաժնի պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Կազմակերպում է արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքները,
2. կազմակերպում է էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրանց հիման վրա համապատասխան գնահատումների իրականացման աշխատանքները,
3. կազմակերպում է բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքներ,
4. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական-վերլուծական ամփոփագրերի և զեկույցների մշակման աշխատանքները,
5. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ձևավորումը,
6. կազմակերպում է ըստ անհրաժեշտության ու հնարավորության՝ հարցումների իրականացման և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքները

7. կազմակերպում է տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների ու կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքները,

8. կազմակերպում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակվող միջազգային ռեյտինգների և ցուցիչների բարելավմանն ուղղված քաղաքականությունների մոնիթորինգի իրականացման աշխատանքները,

9. կազմակերպում է Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները:

Իրավունքները՝

- համապատասխան մարմիններից, ինչպես նաև նախարարության և կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը,
- նախարարության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այլ մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ կազմակերպել քննարկումներ, տեսակոնֆերանսներ,
- իրականացնել քաղաքացիների ընդունելություն,
- համագործակցել Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, հետազոտական կառույցների, միջազգային կազմակերպությունների և փորձագետների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,
- պահանջել Վարչության գործունեության ոլորտներին վերաբերվող օրենքների և իրավական այլ ակտերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային փաստաթղթերի նախագծերը:

Պարտականությունները՝

- ամփոփել և գնահատել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պարբերական տեղեկատվական-վերլուծական ամփոփագրերի մշակման աշխատանքները,
- գնահատել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների տվյալների բազայի ճշգրտությունը,
- ստուգել և ամփոփել ըստ անհրաժեշտության և հնարավորության նպատակային հարցումների իրականացման և դրանց հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,
- ստուգել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությունը, և դրանք ներկայացնել նախարարին, ստորաբաժանումը համակարգող նախարարի տեղակալին և նախարարության Գլխավոր քարտուղարին,

• գնահատել արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների լիարժեք և որակով իրականացման աշխատանքները

• գնահատել էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումների իրականացման աշխատանքները,

• ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման վերաբերյալ,

• ամփոփել մակրոտնտեսական հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները և դրանց հիման վրա ներկայացնել համապատասխան առաջարկություններ նախարարին, ստորաբաժանումը համակարգող նախարարի տեղակալին և նախարարության Գլխավոր քարտուղարին,

• ստուգել վարչության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված զեկույցները և տալ ցուցումներ և առաջարկություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն
2	**Ոլորտ**	Սոցիալական և վարքաբանական գիտություններ	Մաթեմատիկա և վիճակագրություն
3	**Ենթաոլորտ**	Տնտեսագիտություն	Միջոլորտային մասնագիտություններ
4	**Մասնագիտություն**		Ֆինանսական մաթեմատիկա

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում

3. Կոնֆլիկտների կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Փաստաթղթերի նախապատրատում
8. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ կամ մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ կամ մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: